ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03/04/2025թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/24 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «9» հոկտեմբեր 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Հ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածով և 03/04/2025թ. կնքված N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/24 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 4.1 կետում «386,760 (երեք հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր վաթսուն)» թիվը և բառերը փոխարինել «398,760 (երեք հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր վաթսուն)» թվով և բառերով:

1.2. Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում 2-րդ չափաբաժնի «տեխնիկական բնութագիրը» սյունակում «Քանակը՝ 5 կետ հունվար-մարտ ամիսների համար և 2 կետ ապրիլ-դեկտեմբեր ամիսների համար» բառերը փոխարինել «Քանակը՝ 5 կետ հունվար-մարտ ամիսների համար, 2 կետ ապրիլ-դեկտեմբեր ամիսների համար և մեկ կետ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար» բառերով:

1.3. Պայմանագրի N 2 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցում 2-րդ չափաբաժնի «հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և Ընդհամենը» սյունակներում «132000» թիվը փոխարինել «144000» թվով:

1.4. Սահմանել, որ սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են 01.10.2025թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1. 03/04/2025թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/24» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ 900011018539 ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր գնահատող _____-Ա. Եսայան /ստորագրություն/	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ ք. Երևան, Ազատության 24/1 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163004038861 ՀՎՀՀ 02500052 Գլխավոր Տնօրեն՝ _____ Հ. Եսայան (ստորագրություն) Կ.Տ.